Թաթոս եղբայրը մօտեցաւ իւղային ճրագին, նրա պատրոյգը ուղղեց. նրա կինը եւ աղջիկը, մեզանից հեռու նստած, ուշադրութեամբ լսում էին: Սուրբ գրքերի տարածողը մի առանձին հիացմունքով նայում էր միսիոնարների առաջին աշակերտի վրայ: Նրա նեղ, փոքրիկ աչքերը, որ կապիկի աչքերի նման արագ թարթափում էին, կարծես մեզ ասելիս լինէին. «դէ՛, եթէ քաջութիւն ունէք, խօսեցէք մեր վարպետի հետ, նա ձեր պատասխանը ըստ կարգին կտայ»:

— Ասացէք, խնդրեմ, ձեր նպատակը միայն կրօն տարածե՞լն է, — հարցրեց Ջալլադը:

— Միայն այդ է, — պատասխանեց միսիոնարների առաջին աշակերտը:

— Դուք երբեք չէ՞ք մտածում, որ ժողովուրդը, բացի տիրոջ խօսքից, այլ պէտքերի եւս կարօտ է, օրինակ, ձեր կարեկցութիւնը չէ՞ գրաւում նրա թշուառութիւնը, աղքատութիւնը, իր նեղիչներից հարստահարոիլը եւ այլն:

Նա փոխանակ պատասխանելու, ձեռքը տարաւ դէպի իր ծոցը, հանեց այնտեղից մի փոքրիկ աւետարան, որը մի մեծ օրացոյցի չափ հազիւ կը լինէր եւ կարդաց Մատթէոսի Զ-րդ Գլ. 33-րդ համարը. «Խնդրեցէ՛ք նախ զարքայութիւն աստուծոյ եւ զարդարութիւն նորա. եւ այդ ամենայն հաւելցի ձեզ: Մի այսուհետեւ հոգայցէ՛ք վասն վաղիւին՝ զի վաղիւն վասն իւր հոգասցի»:

— Այդ ես գիտեմ... — ասաց Ջալլադը, խնդրելով, որ գոցէ աւետարանը: — Եթէ աստուծոյ արքայութիւնը այնպէս գալու լինէր, ինչպէս ցանկանում էր մեր Փրկիչը, իրաւ է, մենք երբեք աղքատ ու թշուառ չէինք լինի, բայց այնպէս չեղաւ... Հարուստը մնաց հարուստ, աղքատը մնաց աղքատ...

Յետոյ խօսքը փոխելով հարցրեց նա.

— Ձեր միսիոնարները, երեւի, լաւ են ապրում, այնպէս չէ՞. կառքեր ունեն, ձիաներ ունեն, ծառաներ ունեն եւ միշտ փառաւոր սեղան ունեն: Ինչո՞ւ նրանք չեն փորձում իրանց անձի վրայ Զ-րդ Գլ. 33-րդ համարի ասացուածքը, որ իրանք եւս աղքատ կեանք վարեն եւ իրանց օրինակով մխիթարեն ժողովրդի աղքատութիւնը:

— Բայց նրանք մեծ փողեր են ստանում, — պատասխանեց միսիոնարների առաջին աշակերտը, աւետարանը ձեռքից ցած չդնելով: — Նրանք մեզ նման չեն, նրանք այնպէս լաւ կեանքի սովորած են:

— Դուք կարծում էք՝ վա՞տ է լաւ կեանքը...

— Սատանայի փորձութիւնը աւելի շուտով յաջողւում է լաւ կեանքի հետամուտ եղողների վերաբերութեամբ: